



<< ---- >> -----2017թ.

N -----

ՖԱԿՏՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԻ ԼՐԱԳՐՈՂ  
ՇՈՂԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 07.09.2017թ N 5F8C-7199-5885 գրության՝ ներկայացնում ենք հետևյալ տեղեկատվությունը՝

1. ՀՀ Արմավիրի մարզում 11.09.2017թ դրությամբ շինվերանորոգման աշխատանքներ են ընթանում երկու դպրոցներում, ևս չորս դպրոցների (Արմավիր քաղաքի թիվ 3 հիմնական դպրոցի վերանորոգում, Արմավիր քաղաքի թիվ 10 հիմնական դպրոցի վերանորոգում, Արազափ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում և Նոր Կեսարիա համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում աշխատանքները կսկսվեն պայմանագրերի կնքման դրական եզրակացություն ստանալուց հետո:

1) <<Թաիրով համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում>>- գտնվում է Փարաքար համայնքում և վերանորոգվելու է ամբողջությամբ:

2) <<Գրիբոյեդով համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում>>- գտնվում է Գրիբոյեդով համայնքում և ջեռուցման համակարգը կառուցվելու է ամբողջությամբ:

2. 1) Թաիրով համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքները իրականացվում են <<Սյունիք>> ՍՊԸ-ի կողմից:

2) Գրիբոյեդով համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները իրականացվում են <<Միլաքս Գրուպ>> ՓԲԸ-ի կողմից:

3. Շինարարական աշխատանքները ընթանում են պայմանագրում նշված օրացուցային գրաֆիկի համաձայն և կավարտվեն պայմանագրում նշված ժամկետներում:

1) Թաիրով համայնքի միջնակարգ դպրոցի 2017թվականի համար նախատեսված աշխատանքները կավարտվեն 20.12.2017թ:

2) Գրիբոյեդով համայնքի միջնակարգ դպրոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները կավարտվեն 24.11.2017թ:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատ.՝ Կ.Դանիելյան  
Ա. Հովհաննիսյան  
հեռ. 0237) 2-13-77